ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Պետրոսյան Հ. (ԵՊՀ, Հայաստան)
hpetrosy@gmail.com

Բանալի բառեր՝ Արցախ, Տիգրանակերտ, Տիգրան Մեծ, մշակութային ժառանգություն, հայ-ադրբեջանական հակամարտություն, պեղումներ:

Ձեկուցման մեջ Արցախի Տիգրանակերտի հայտնաբերման, հետազոտության և հանրահռչակման գործընթացի քննությամբ ներկայացվում են պատմական ժառանգության դերակատարման խնդիրները հայ-ադրբեջանական հակամարտության մեջ:

1. Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունը հայ մշակութային ժառանգության հայտնաբերման, հետազոտության, հանրահռչակման և այն ներկա մշակութային գործընթացի մաս դարձնելու վերջին տարիների ամենահաջող ձեռնարկներից է: Դրան նպաստում են ծավալուն պեղումները, հուշարձանի լրացուցիչ մաքրումներն ու լանդշաֆտային տեսքի պահպանումը, հանրահռչակմանն ուղղված ամբողջական քաղաքականությունը՝ հրատարակություններ, ինտերնետային կայքի ստեղծում, պարբերաբար կազմակերպվող ցուցահանդեսներ և, ի վերջո, Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ստեղծում հենց հուշարձանի տարածքում: Արդյունքում Տիգրանակերտն այսօր ամենաշատ այցելվող, ինտերնետում լայնորեն ու մանրամասնորեն ներկայացված, հանրությանն առավել քաջածանոթ հուշարձանն է Արցախում: Միայն վերջին տարում Տիգրանակերտի մասին երեք փաստավավերագրական ֆիլմեր են ստեղծվել, ընթացքի մեջ են ևս

երկուսը: Կարելի է հավաստել, որ Տիգրանակերտն Արցախում օր օրի թափ առնող մշակութային քաղաքականության հիմքերից մեկն է:

2. Այս ընթացքի ետնախորքի վրա խիստ ուշագրավ է ադրբեջանական գիտական և հասարակական վերաբերմունքի քննությունը: Այն կարելի է բնութագրել որպես անլրջությունից դեպի զգաստացում, փաստերի անտեսումից մինչև դրանց ընդունման ու մեկնաբանության գործընթաց, որի քննությունն օգնում է հասկանալ նաև սեփական ձեռնարկումների հաջողության և անհաջողության պատճառները:

3. Ակնհայտ հաջողությունների հետ մեկտեղ Տիգրանակերտի հանրահռչակման գործընթացը երևան բերեց հայաստանյան գիտական հանրույթի խայտաբղետության, գիտական հետազոտություններում սիրողականության և սնապարծության, մշակութային, ժառանգության հանդեպ տարվող քաղաքականության, գիտության և մշակույթի կառվարման հետ կապված բազմաթիվ խնդիրներ, որոնց քննությունը նույնպես զեկուցման հիմնական թեմաներից մեկն է:

THE CULTURAL HERITAGE IN THE CONTEXT OF ANTAGONISM: ARTSAKH’S TIGRANAKERT

Petrosyan H. (Yerevan State University, Armenia)